ձակւում էր եւ տափարակ ձեւ էր ստանում: Այդ տափարակի վրայ երեւում էին բազմաթիւ բնակութիւնների հետքեր: Վտանգի ժամանակ այստեղ էին պատսպարւում ստորոտի բնակիչները: Բոլորովին գագաթի վրայ շինուած էր միջնաբերդը: Պարիսպները, աշտարակները, այլեւայլ ամրութիւնները, իրանց կանգուն ժամանակ այն աստիճանի վիթխարի ձեւ են ունեցել, որ նրանցից ցած թափուած քարերը իրանց կուտակութեան ներքոյ ծածկում էին ընդարձակ տարածութիւն եւ հասնում էին մինչեւ ստորոտի դաշտավայրը: Հմուտ մուրճի ու կարկինի գործը եւ անջնջելի կրային ծեփը միայն որոշում էին այդ ահագին քարերը լեռան մեծամեծ ժայռերից, որոնց հետ խառնուած էին: Հսկաների ձեռքը միայն կարող էր այդ ահագին մեծահատոր քարերը միմեանց վրայ շարել եւ լեռնային բուրգեր կառուցանել:

Ասլանը կանգնած էր այդ դիցական աւերակների բեկորների վրայ եւ մի առանձին ոգեւորութեամբ նայում էր դէպի շրջակայքը, նայում էր դէպի ընդարձակ հեռաստանը եւ կարծես իր սրատես աչքերով չափում էր կանաչազարդ հովտի տարածութիւնը, մինչեւ հեռաւոր լեռները, մինչեւ կապուտակ ծովը...

ԻԲ. ԳՈՒՇԱԿՈՂԸ

Երբ ցած իջանք բերդից, Ասլանը իսկոյն նստեց իր ձին եւ, առանց մի բան ասելու, քշեց դէպի Հայոց-ձորի հարաւային կողմը՝ Ռշտունեաց լեռները: Երկու երիտասարդները երեւի գիտէին, թէ նա ուր է գնում, իրանց ձիաների գլուխը դարձրին դէպի այն կողմը: Ես եւս հետեւեցի նրանց:

Երկար գնում էինք առանց խօսելու: Մեզանից իւրաքանչիւրը, այն տպաւորութիւններից յետոյ, որ թողեց մեզ վրայ Հայկայ քայքայուած բերդը, խորասուզուած էր իր մէջ:

Տօ՛թ էր, հետկէսօրեան այն խեղդող տօթը, երբ սար ու քար տաքանում է. կրակ է կտրում, երբ օդը սաստիկ բորբոքւում է, կարծում ես, թէ հնոցի մէջ տապակւում ես: Քրտինքը հոսում է մարմնից եւ թողնում է երեսի վրայ թանձր, աղային կեղեւ: Շրթունքները ճաքճքում են, եւ աչքերդ սկսում են այրել: Որպէս մանր, հազիւ նշմարելի փոշի, գլխիդ շուրջը վըժոըժում են միլիոնաւոր միջատներ: Շունչ ես քաշում, բերանդ, քիթդ լցւում է այդ չարաճճիկ արարածներով. աչքերդ բաց ես անում, լցւում են աչքերիդ մէջ, իսկ ականջներիդ մէջ իրանց ուրախ երաժշտութիւնն են կատարում: Հնար չկայ ազատելու նրանց խայթոցից: Մարմնիդ վրայ որքան բաց տեղեր են մնացել. երեսդ, պարանոցդ, ձեռքերդ կարծես ծակծկում են մանր ասեղներով: